Ուղղությունը. Տնտեսագիտություն, բակալավրիատ, առկա ուսուցում .

Առարկա Б1.В11. Միջազգային տնտեսգիտություն

Անոտացիա

Աշխատատարությունը՝ *4 կրեդիտ, 144 ակադեմիական ժամ*

Քննություն

Համառոտ նկարագրություն. Դասընթացն ուսումնասիրում է միջազգային տնտեսության զարգացման օրինաչափությունները, տալիս է հստակ պատկերացումներ միջազգային տնտեսական հարաբերությունների հիմնական ձևերի և ուղղությունների մասին:

Ուսանողները ստանում են որոշակի պատկերացումներ միջազգային առևտրի զարգացման օրինաչափությունների, դրա վրա ազդող գործոնների և կազմակերպման ու կարգավորման ձևերի մասին: Դասընթացը ներառում է նաև ապրանքների և ծառայությունների միջազգային առևտրի, արտաքին առևտրի գործունեության ապահովման ձևերը:

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել միջազգային տնտեսական հարաբերությունների և առևտրի, միջազգային ֆինանսների և ֆինանսական հարաբերությունների ոլորտում առաջացող հիմնական տեսական և գործնական հարցերին:

Կապը ուսումնական պլանի այլ առարկաների հետ. Դասընթացը սերտորեն կապված է հետևյալ առարկաների հետ՝ «Միջազգային դրամավարկային հարաբերություններ», «Մակրոէկոնոմիկա», «Միկրոէկոնոմիկա»